Կրասար

Վարչական ղեկավար՝ Մելիքյան Խաչիկ

Հեռ 077 92 26 84

Մակերես՝ 16.4կմ^2

Բնակչություն՝ 527

krasar.shirak@mta.gov.am

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**ԿՐԱՍԱՐ** ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի ներկայիս անվանումը –Կրասար
Համայնքի պատմական անվանումները- Ղուրդբուլաղ, Գայլաղբյուր
Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը –1875-78թթ.
Որ համայնքներին է սահմանակից համայնքը –Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար,Աշոցք, Կարմրավան, Հովտուն, Ամասիա,
Համայնքի մակերեսը – 2027.07կմ ^{2}
Հեռավորությունը մայրաքաղաքից-160կմ
Հեռավորությունը մարզկենտրոնից -45կմ
Բնակչության թիվը – 540
Բնակչության կազմը –միատարր
Համայնքի նշանավոր մարդիկ – Գուսան Շահեն,Պապիկյան Գառնիկ,Սարգիս Խաչատրյան,
Կրթական հաստատություններ – 1 միջնակարգ դպրոց
Բնակչության հիմնական զբաղմունքը – Գյուղատնտեսություն՝ անասնապահություն, հողագործություն
Հոգևոր կառույցներ – 1 եկեղեցի
Համայնքի մասին գրքի առկայություն – Գուսան Շահեն-Գուսան Հայաստանի

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցք գյուղից 4կմ հյուսիս-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 34կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Կուրդբուլաղ, Կուրտի բուլաղ, Ղուրդբուլաղ, Ղուրդիբուլաղ, Ղուրթբուլաղ անվանումները: Կրասար է վերանվանվել 1946 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Գյուղը տեղադրված է Ախուրյան գետի հովտում՝ ծովի մակարդակից 2000մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:
Գյուղի տարածքում գտնվում է հին եկեղեցու, գերեզմանների, գյուղատեղիների, ավերակներ: Գյուղից մոտ 2կմ հյուսիսարևմուտք՝ □Քարոտ հողեր□ կոչվող դաշտում հայտնաբերվել են միջին բրոնզի դարի դամբարաններ, խեցեղեն առարկաներ:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասենի, Մուշի շրջաններից, Կարսի մարզից 1829-1830թթ: 1897 թ-ին գյուղն ունեցել է 311, 1926 թ-ին՝ 349, 1939 թ-ին՝ 604, 1959 թ-ին՝ 350, 1970 թ-ին՝ 387, 1979 թ-ին՝ 352 հայ բնակիչ: Հնում այստեղ բնակվել են նաև քրդեր: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 527 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 47%, կանայք՝ 53%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 127տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (579հա), խոտհարքերը (46հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 115 և 582 հեկտար: Գյուղատնտեության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, բալ): Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:
ՀՀ Շիրակի մարզ, գ. Կրասար

Ինդեքս՝ 2801